

ԱՆԴԻ ԳԱԼՈՎՅԱՆ  
Ռ-ՋԱՆ ԽԱՐԱՏՅԱՆ  
ԱՆՏՎԻԿ ԲԱԼՅԵՆ

**ՄԱՅՐԵՆԻ ՀԵԶՎԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԿՐՏՈՒԹՅԱԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

*(Երկրորդ լրամշակված հրատարակություն)*



ԵՐԵՎԱՆ, 2010

## ՏԱՐԲԵՐԱԿ 1

### 1. Կարդա՛ և լրացր՛ բաց քողինված տառերը (1 միավոր):

Կարապների երամը ցուրտ վայրերից չվում էր դեպի տաք երկրներ: Թռ\_ում էին կարապները գիշեր ու զ\_ր: Առանց դա\_ար առնելու թռ\_ում էին նրանք կապույտ ծովերի վլայով: Լուսնկա գիշեր էր. ներ\_ևում հազիվիա\_ նշմարվում էր ծովերի արձաթազ\_ծ գոտին: Բոլոր կարապներն եւ շատ հո\_նել էին, բայց շարունակում էին ճա\_ռել: Առ\_ևից թռ\_ում էին տարեց և ուժեղ կարապները, իսկ երամի վեր\_ում՝ բույլերը:

### 2. Եշի՛ տրված նախադասության մեջ ընդգծված բառերից ո՞նք է գործածված փոխաբերական իմաստով (0, 3 միավոր):

**Ուկեզօծ** արևի տաք շողերն ընկել էին լեռների բարձր կատարերին:

1. ուկեզօծ
2. տաք
3. բարձր

### 3. Դո՛րս գրիր 2-ական գոյական, ածական և բայ (1, 2 միավոր):

Փոքրիկ տղան մի փշոտ վարդ տեսավ: Սոտեցավ, որ պոկի, բայց սուր փշերը ծակեցին նրա նուրբ մատները:

գոյական	ածական	բայ

**4. Տրված արմատները և ածանցները միացնելով՝ 5 բառ  
կազմիր: Գրի՛ր այդ բառերը (1 միավոր):**

Սայր -ուկ  
սև -ուհի  
սուրբ -ենի  
բախտ -ություն  
թագ -ավոր

**5. a) Ընդանի՞ր մեկ բառով (0, 8 միավոր):**

Աչքի բժիշկ  
զրուցել սիրող  
ընկույզի ծառ  
կապույտ աչքեր ունեցող

**բ) Տրված բառերով կազմի՛ր բառակապակցություններ և գրի՛ր  
(0, 5 միավոր):**

Բարի  
փայտե  
սառը  
դանդաղ  
երկու

**6. Եշի՛ք՝ ո՞ր նախադասության բնդգծված բառակապակցությունն է դարձվածք (0, 4 միավոր):**

1. Մեր գյուղն ընկած է բարձր լեռների միջև:
2. Իր քնքուշ աշխաներն ե բացում կապույտ ձնձաղիկը:
3. Երբ հորդ անձրևն է զալիս, վարարում է ծորով անցնող գետակը:
4. Այս որ լսեց, արյունը գլխին խփեց:

**9. Ծարտեալի՞ր միտքը՝ գրելով ևս երկու նախադասություն  
(1 միավոր):**

Այգու ծայրին մի ծառ էր աճում: Արևը ջերմացնում էր նրան, քամին  
մեղմորեն շոյում էր ճյուղերը, իսկ տերևները շշնչում էին՝ ցանկացի՛ր:

Դա հրաշք ծառ էր: Ով կանգներ ծառի տակ և որևէ բան ցանկանար,  
մտածածը կիրազործվեր:

Մի օր \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

**10. Ավարտի՛ր նախադասությունները (1 միավոր):**

Ռուսնին աչքերը բացեց և \_\_\_\_\_;  
\_\_\_\_\_;

Լսվում էին երաժշտության վերջին հնչյունները, երբ \_\_\_\_\_;  
\_\_\_\_\_;

**11. Գծով միացրո՛ւ հեղինակի անունը նաևպատճենած  
ստեղծագործությանը (0, 4 միավոր):**

Յովի. Թումանյան	«Մկների ժողովը»
Հ. Պերոն	«Անրան Շուշին»
Ալ. Պուշկին	«Կարմիր գլխարկը»
Ար. Խնկոյան	«Շեքիաթ ձկնորսի ու ձկան մասին»

**12. Գծով միացրո՞ւ առած-ասացվածքների սկիզբն ու վերջը  
(0, 4 միավոր):**

Մինչև գարուն չգա,	խոսքի կարծը:
Գյուղ կանգնի՝	ծառը չի ծաղկի:
Թուկի երկարն է լավ,	մարդը մարդուն կհանդիպի:
Սարը սարին չի հանդիպի.	գերան կկոտրի:

\* **Առած-ասացվածքներից մեկն ընտրի՛ր վերևագիր և մի պատմություն հյուսիր:**

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---

---